# ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

## ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ երիտասարդներ,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ այս գեղեցիկ տոնի՝ երիտասարդների միջազգային օրվա առթիվ:

Այսօր պետք է փաստենք, որ մենք ունենք հրաշալի և խելացի երիտասարդություն, որոնց նվիրվածության շնորհիվ մեր երկրի ապագան գտնվում է հուսալի ձեռքերում: Մենք այսօր հպարտ ենք մեր ուժեղ երիտասարդներով, նրանց բանիմացությամբ և համայնքային բոլոր կարևոր իրադարձություններին մասնակցային նրանց բարձր որակներով:

Համայնք-պետություն ճիշտ գործելակերպի արդյունքում էլ այսօր փորձում ենք անել ամեն ինչ մեր երիտասարդների պահանջմունքներին և պատկերացումներին համապատասխան պայմաններ ստեղծելու համար, որպեսզի նրանք ապրեն էլ ավելի զարգացած և բարեկեցիկ երկրում:

Սիրելի՛ երիտասարդներ, ևս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիդ Երիտասարդների միջազգային օրվա կապացությամբ, մաղթելով ձեզ քաջառողջություն, խաղաղ երկինք և շարունակական հաջողություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ